Խաղողօրհնեք

… Քահանան մկրատով կտրում էր մի ողկույզ, բարձրացնում այն արևի դիմաց և մաղթում. «Երկնքի լույս Թուխ – մանուկներեն ցողված են այս մեր այգիների ողկույզները: Աստված օրհնեց մեր այգիները Նոյի տապանով, Մովսեսի տապանակով, Քրիստոսի Սուրբ Խաչով, Աստվածածնի արցունքով, Լուսավորչի լույս հավատով, Հաց ու գինի, Տեր կենդանի: Մեր այգիներն էլ միշտ պիտի առատ լինեն, ողկույզները՝ միշտ անսպառ»: Օրհնված խաղողից այնուհետև ողկույզներ են տարվում դրվում լուսաղբյուրների և խաչքարերի վրա, «որպեսզի թռչնակներն էլ անմասն չմնան երկրի այս բարեբերությունից»: Նույն օրհնված խաղողն է նաև, որ օրհնված գինի պիտի դառնա, և նույն խաղողից է նաև, որ օրհնված գինի պիտի դառնա, և նույն խաղողից է, որ մարդիկ պահում են մինչև հաջորդ տարվա խաղողօրհնեք՝ որպես լիառատության ապահովման նշան:

… Անցյալում խաղողօրհնեքի ծեսը հիմնականում տեղի էր ունենում այգիներում, երբ քահանան մի ձեռքին մկրատը, իսկ մյուսին՝ խաչը բռնած, այցելում էր եկեղեցու կամ տվյալ բնակավայրի երեցփոխի այգիները և հենց այնտեղ էլ կատարում խաղողի օրհնության արարողությունը: Խաղողից բաժին էին հանում նաև թռչուններին, որոնց համար օրհնված ողկույզները կախում էին աղբյուրների կամ խաչքարերի վրա: Խաղողօրհնեքի պատարագի ավարտից հետո, սովորաբար ամանները շարում էին եկեղեցու բակում և բոլորը միասին ճաշակում օրհնված խաղողը:

Ո՛վ Տեր, նույն օրհնությամբ, որով օրհնեցիր Քո կողմից ստեղծված բարի արարածներին առաջին արաչությանդ ժամանակ, օրհնեցիր նաև երկրորդի ընթացքում, օրհնիր նաև այժմ Քեզ նվիրված նորոգված տարվա երախայրիքի այս պտուղը՝ խաղողի ողկույզները, ըստ Ահարոնի հին քահանայության, ինչպես որ օրինադրեցիր Իսրայելի տոհմի համար Մովսեսի ձեռքով՝ բոլոր պտուղների անդրանիկն ընծայաբերել Քո Վկայության Խորանին: Եվ սա հաստատվեց, որպեսզի մասնավոր ընծաների միջոցով Քո օրհնությունը տարածվի բոլոր պտուղների վրա: Այսպես նաև ընծայաբերված այս պտղին խառնելով միացրու Քո

Աստվածային և հոգևոր օրհնությունը, որպեսզի, այս նյութական պտուղների ճաշակմանը համաժամանակ, Քո օրհնության իմանալի շնորհը սրա միջոցով միախառնվի ճաշակողների հոգիներին: Եվ որպեսզի մաքրություն և մեղքերի թողություն ստանան այս ճաշակմամբ, և սրանով արժանի լինենք ճաշակելու այն կենաց ծառի պտղից, որ հրամայեցիր Քերովբեների դասին՝ պահպանել բոցեղեն սրով: Այս ճաշակմամբ անմահանալով՝ անմահների դասերի հետ միշտ՝ պիտի փառավորենք Քեզ՝ Որդուդ և Ամենասուրբ Հոգուդ հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:
Ով Տեր, Քո անվան փառքի տաճարին ընծայված այս ողկույզների պտուղն օրհնիր Քո նախնական օրհնությամբ, ինչպես օրհնեցիր ողկույզների մեջ գտնված ողկուզակը և նրանց, ովքեր ճաշակում են Քո կողմից օրհնված այս պտղից, շնորհիր մեղքերի թողություն, հոգու և մարմնի առողջություն: Սրանից հավատքով ճաշակողներին արժանացրու եդեմական դրախտի անմահական պտղից ճաշակել՝ դրախտը ժառանգող ավազակի պես: Օրհնի՛ր, Ով Տեր, նորահաս պտուղ ընծայողներին և այս անցնող պտղի փոխարեն նրանց շնորհիր արժանանալ անմահական կյանքի վայելչությանը:
Օրհնիր, Տեր, նաև այն որթատունկերը և այգիները, որոնցից քաղվեցին օրհնության համար բերված ողկույզները և ընծայվեցին Սուրբ Եկեղեցուն, դարձրու դրանք պտղաբեր և արգասաբերության մեջ՝ բազմաբեղուն, ինչպիսին բազմաբեղուն և պարարտ հողն է: Անփորձանք պահիր, Ով Տեր, արտերն ու այգեստանները, որտեղից բերված են այս պտուղները: Հեռու պահիր դրանք կարկտից, եղյամաբեր սառնամանիքից, խորշակահար հողմերից, վնասակար ճիճուներից և ամեն տեսակի վնասակար պատահարներից, որպեսզի, վայելելով Քո նյութեղեն բարիքները, որ այս աշխարհում մեզ շնորհեցիր Քո փառքի համար, միաժամանակ արժանի լինենք Քեզ հետ ուտելու և ըմպելու Հորդ Արքայության սեղանի ամենակենսալի որթի բերքից, համաձայն անսուտ խոստման, որ Քո կողմից տրվեց, ի պատիվ և ի փառս համագո Երրորդության՝ Հոր և Որդու և Ամենասուրբ Հոգու, որին վայել է փառք, իշխանություն և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն: